ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«20» «հուլիս» 2022թ. № 547-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 18-ի N 42/45.45/23209 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետերով.

«449) Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ2-9) պաշտոնի անձնագիրը (ծածկագիր՝ 15-33.4-Մ2-1)՝ համաձայն N 449 հավելվածի,

450) Շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ4-5) պաշտոնի անձնագիրը (ծածկագիր՝ 15-33.4-Մ2-1)՝ համաձայն N 450 հավելվածի,

451) Շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-33.2-Մ4-10) պաշտոնի անձնագիրը (ծածկագիր՝ 15-33.4-Մ2-1)՝ համաձայն N 451 հավելվածի,

452) Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության Արարատյան ջրավազանային տարածքային կառավարման բաժնի ավագ

մասնագետի (ծածկագիր՝ 15-32.1-Մ5-12) պաշտոնի անձնագիրը (ծածկագիր՝ 15-33.4-Մ2-1)՝ համաձայն N 452 հավելվածի:»

2) ուժը կորցրած ճանաչել հրամանի 1-ին կետի 269-րդ, 324-րդ, 423-րդ, 446-րդ ենթակետերը և հրամանի 269-րդ, 324-րդ, 423-րդ և 446-րդ հավելվածները:

3) հրամանով հաստատված 421-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության Արարատյան ջրավազանային տարածքային կառավարման բաժնի պետի (ծածկագիր՝ 15-32.1-Ղ4-25) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի «1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Վարչության պետի տեղակալը կամ Բաժնի ավագ մասնագետներից մեկը:»

4) հրամանով հաստատված 422-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության Արարատյան ջրավազանային տարածքային կառավարման բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.1-Մ3-7) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի մյուս ավագ մասնագետը:

5) հրամանով հաստատված 323-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.2-Մ4-5) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը:»

6) հրամանով հաստատված 349-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 15-32.5-Ղ3-2) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը կամ Վարչության ավագ մասնագետներից մեկը:»

7) հրամանով հաստատված 350-րդ և 351-րդ հավելվածներում՝ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ2-7), շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ2-8) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի **«1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Վարչության մյուս գլխավոր մասնագետներից կամ Վարչության ավագ մասնագետներից մեկը:»

8) հրամանով հաստատված 353-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.5-Մ4-4) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Վարչության գլխավոր մասնագետներից մեկը կամ Վարչության մյուս ավագ մասնագետը:»

9) հրամանով հաստատված 445-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.2-Ղ4-6) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետը կամ Բաժնի ավագ մասնագետը:»

10) հրամանով հաստատված 445-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.2-Ղ4-6) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Ապահովում է Նախարարության ներքին ցանցի աշխատանքների կազմակերպման և սպասարկման աշխատանքները:
2. Ապահովում և իրականացնում է Նախարարության սերվերների կառավարման, տվյալների արխիվացման և համացանցային կապի տրամադրման աշխատանքները

3. Ապահովում է Նախարարության համակարգչային տեխնիկայի ծրագրային սպասարկումը և շահագործումը:
4. Ապահովում և իրականացնում է կանոնադրությամբ Բաժնին վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի և նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերին վերաբերող անհրաժեշտ տեղեկանքների տրամադրումը:
5. Ապահովում է Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը և ներկայացումը,

Իրավունքները՝

- Վերադասին ներկայացնել առաջարկություններ համակարգչային տեխնիկայի, տեղային (լոկալ) ցանցի, սերվերների սպասարկման, ծրագրային փաթեթների տեղադրման անխափան աշխատանքների կազմակերպման, վերահսկման և համակարգման ուղղությամբ,
- Նախարարության և համակարգի կազմակերպություններից, ընկերություններից, հիմնարկներից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն, նյութեր և փաստաթղթեր,
- ներկայացնել առաջարկություններ մասնագիտական աշխատանքների վերաբերյալ

Պարտականությունները՝

- Հետևել Նախարարության համակարգչային ցանցերի անխափան և անվտանգ աշխատանքներին,
- Կատարել Նախարարության համակարգչային ցանցում գործող ցանցային սարքավորումների և սերվերային համակարգերի տեղադրման և սպասարկման աշխատանքները,
- Հսկել Նախարարության համացանցի սպասարկման, օգտատերերի գրանցման աշխատանքների կազմակերպումը,
- Ուսումնասիրել և վերլուծել Նախարարությունում գործող սերվերային համակարգերի, համակարգիչների օպերացիոն համակարգերի և ծրագրային փաթեթների արդիականացման աշխատանքները,
- Կազմել տեղեկանքներ կանոնադրությամբ Բաժնին վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի և նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի վերաբերյալ,Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:»:

7/20/2022

X

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Signed by: GULYAN GRIGOR 3202780018

Գ.ԳՈՒԼՅԱՆ

« 20 » հուլիսի 2022թ.

ք. Երևան